

## Չափագրում (հաշվառում) \_Գրավոր

Հարց 1. Քանի՞ գործառնական նշանակությունների են դասակարգվում բնակավայրերի հողերը:

- 5 գործառնական նշանակությունների:

ՀՀ հողային օրենսգիրք 10-րդ հոդվածի 2-րդ մաս

Հարց 2. Ինչպիսի՞ գործառնական նշանակությունների են դասակարգվում բնակավայրերի հողերը:

- Բնակելի, հասարակական, խառը կառուցապատման, ընդհանուր օգտագործման և այլ հողեր:

ՀՀ հողային օրենսգիրք 10-րդ հոդվածի 2-րդ մաս

Հարց 3. Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում անհատական բնակելի տների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը:

- Բնակելի կառուցապատման:

ՀՀ հողային օրենսգիրք 10-րդ հոդվածի 4-րդ մաս

Հարց 4. Խառը կառուցապատման գործառնական նշանակության հողերը որ նպատակային նշանակության հողերի շարքում են դասակարգվում:

- Բնակավայրերի:

ՀՀ հողային օրենսգիրք 10-րդ հոդվածի 2-րդ մաս

Հարց 5. Այգեգործական հողերը որ գործառնական նշանակության հողերի շարքին են դասվում:

- Բնակելի կառուցապատման:

ՀՀ հողային օրենսգիրք 10-րդ հոդվածի 4-րդ մաս

Հարց 6. Երկաթուղային օբյեկտները որ գործառնական նշանակության հողերի շարքին են դասվում:

- Տրանսպորտի օբյեկտների հողեր:

ՀՀ հողային օրենսգիրք 17-րդ հոդվածի 1-ին մաս

Հարց 7. Հեռուստատեսության օբյեկտները որ գործառնական նշանակության հողերի շարքին են դասվում:

- Կապի օբյեկտների հողեր:

ՀՀ հողային օրենսգիրք 16-րդ հոդված

Հարց 8. Արգելանոցների հողերը որ գործառնական նշանակության հողերի շարքին են դասվում:

- Բնապահպանական հողերի:

ՀՀ հողային օրենսգիրք 20-րդ հոդված

Հարց 9. Չբուսաշրջության բազաներով զբաղեցրած հողերը որ գործառնական նշանակության հողերի շարքին են դասվում:

- Հանգստի համար նախատեսված հողերի:

ՀՀ հողային օրենսգիրք 22-րդ հոդված

Հարց 10. Ճահիճներով զբաղեցրած հողերը որ նպատակային նշանակության հողերի շարքին են դասվում:

- Պահուստային հողերի:

ՀՀ հողային օրենսգիրք 27-րդ հոդված

Հարց 11. Ի՞նչ կատեգորիայի հողեր կարող են լինել բնակավայրի սահմաններում:

- Հողային ֆոնդի կազմում առկա բոլոր հողերը:

ՀՀ հողային օրենսգիրք 11-րդ հոդվածի 2-րդ մաս

Հարց 12. Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում հիդրոէլեկտրոկայանների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը:

- Էներգետիկայի:

ՀՀ հողային օրենսգիրք 15-րդ հոդված

Հարց 13. Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում օդանավակայանների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը:

- Տրանսպորտի:

ՀՀ հողային օրենսգիրք 17-րդ հոդվածի 1-ին մաս

Հարց 14. Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում մաքրման կայանների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը:

- Կոմունալ ենթակառուցվածքների:

ՀՀ հողային օրենսգիրք 18-րդ հոդված

Հարց 15. Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում համայնքային և մասնավոր գերեզմանատները:

- Կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի:

ՀՀ հողային օրենսգիրք 18-րդ հոդված

Հարց 16. Քանի՞ գործառնական նշանակությունների են դասակարգվում հատուկ պահպանվող հողերը:

- 4 գործառնական նշանակությունների:

ՀՀ հողային օրենսգիրք 19-րդ հոդվածի 2-րդ մաս

Հարց 17. Ինչպիսի՞ հողատեսքերի են բաժանվում անտառային հողերը:

- Անտառներ, վարելահողեր, խոտհարքներ, արոտներ, թփուտներ և այլ հողեր:

ՀՀ հողային օրենսգիրք 25-րդ հոդվածի 3-րդ մաս

Հարց 18. Ո՞ր դեպքերում կարող են անտառային հողերը տրամադրվել վարձակալությամբ՝ շենքեր և շինություններ կառուցելու նպատակով:

- Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ բացառապես անտառային տնտեսության կարիքների համար:

ՀՀ հողային օրենսգիրք 25-րդ հոդվածի 4.1 մաս

Հարց 19. Ի՞նչ կարգով են սահմանվում անտառային հողերի տրամադրումը, պայմաններն ու օգտագործման նկատմամբ սահմանափակումները և հողօգտագործման հատուկ ռեժիմը:

- Հողային օրենսգրքով, Անտառային օրենսգրքով և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով:

ՀՀ հողային օրենսգիրք 25-րդ հոդվածի 5-րդ մաս

Հարց 20. Ո՞ր հողերը կարող են ներառվել պահուստային հողերի կազմում:

- Քաղաքաշինական ու հողաշինարարական փաստաթղթերով առանձնացված չօգտագործվող հողերը, ինչպես նաև ավազուտները, ճահիճները և այլ անօգտագործելի հողերը:

ՀՀ հողային օրենսգիրք 27-րդ հոդվածի 2-րդ մաս

Հարց 21. Ո՞ր մարմինն է սահմանում և փոփոխում հողերի նպատակային և գործառնական նշանակությունը:

- Տեղական ինքնակառավարման մարմինները՝ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ հողային օրենսգիրք 3-րդ հոդված

Հարց 22. Ովքե՞ր կամ ո՞ր մարմիններն են իրականացնում հողերի ընթացիկ հաշվառումը:

- Տեղական ինքնակառավարման մարմինները:

ՀՀ հողային օրենսգիրք 3-րդ հոդված

Հարց 23. Ո՞վ է իրականացնում հսկողություն հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման և հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ:

- Համայնքի ղեկավարը:

ՀՀ հողային օրենսգիրք 43-րդ հոդվածի 1-ին մաս

Հարց 24. Քանի՞ տարի կարող է սահմանվել պետության և համայնքի սեփականության հողերի կառուցապատման իրավունքով տրամադրման առավելագույն ժամկետը:

- Չի կարող գերազանցել 99 տարին:

ՀՀ հողային օրենսգիրք 48.1-րդ հոդվածի 4-րդ մաս

Հարց 25. Քաղաքացիություն չունեցող անձիք հանդիսանում են արդյոք հողային հարաբերությունների սուբյեկտներ:

- Այո:

Հարց 26. Ի՞նչ է հողամասի սերվիտուտը:

- Մեկ կամ մի քանի սեփականատերերի հողամասերից սահմանափակ օգտվելու իրավունքն է:

ՀՀ հողային օրենսգիրք 50-րդ հոդվածի 1-ին մաս

Հարց 27. Ի՞նչ կարգով կարող են օտարվել պետական սեփականության հողամասերը:

- Սեփականության իրավունքի անհատույց փոխանցելու միջոցով, ուղղակի վաճառքի միջոցով, աճուրդով, փոխանակությամբ:

ՀՀ հողային օրենսգիրք 63-րդ հոդված

Հարց 28. ՀՀ հողային ֆոնդը քանի՞ նպատակային նշանակության (կատեգորիաների) է դասակարգվում:

- 9 կատեգորիաների:

ՀՀ հողային օրենսգիրք 6-րդ հոդվածի 1-ին մաս

Հարց 29. Ովքե՞ր կամ ո՞ր մարմինն է վարձակալության իրավունքով տրամադրում համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը:

- Համայնքի ղեկավարը:

ՀՀ հողային օրենսգիրք 76-րդ հոդվածի 2-րդ մաս

Հարց 30. Ի՞նչ է հողատեսքը:

- Գյուղատնտեսական և անտառային նշանակության հողերի այն հատկանիշների համալիրն է, որը բնութագրում է դրանց գործառնական օգտագործումը:

ՀՀ հողային օրենսգիրք 7-րդ հոդվածի 3-րդ մաս

Հարց 31. Ի՞նչ հողատեսքերի են բաժանվում գյուղատնտեսական նշանակության հողերը:

- Վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտներ և այլ հողատեսքեր:

ՀՀ հողային օրենսգիրք 9-րդ հոդվածի 2-րդ մաս

Հարց 32. Ու՞մ թույլտվությամբ և ի՞նչ կարգով է իրականացվում գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերի փոխադրումն ավելի ցածրարժեք հողատեսքերի:

- Համայնքի ղեկավարի թույլտվության հիման վրա՝ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ հողային օրենսգիրք 9-րդ հոդվածի 4-րդ մաս

Հարց 33. Ըստ ժամկետների ինչպիսի՞ն կարող է լինել սերվիտուտը:

- Ժամանակավոր կամ մշտական:

ՀՀ հողային օրենսգիրքի 50-րդ հոդվածի 3-րդ մաս

Հարց 34. Բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կազմում ընդգրկված են արդյոք կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության հողամասերը:

- Ոչ:

ՀՀ հողային օրենսգրքի 10-րդ հոդված:

Հարց 35. Բնակչության սոցիալական սպասարկման համար տրամադրված հողամասերը որ գործառնական նշանակության հողերի շարքում են դասվում:

- Հասարակական կառուցապատման:

ՀՀ հողային օրենսգրքի 10-րդ հոդված:

Հարց 36. Ո՞ր հողամասերն են դասակարգվում ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողերի շարքում:

- Որոնք զբաղեցված են փողոցներով, հրապարակներով, զբոսայգիներով և հանրության կողմից օգտագործվող այլ տարածքներով:

ՀՀ հողային օրենսգրքի 10-րդ հոդված:

Հարց 37. Ո՞ր հողերն են դասակարգվում բնակավայրերի այլ հողերի գործառնական նշանակության շարքում:

- Բնակելի, հասարակական, խառը կառուցապատման և ընդհանուր օգտագործման համար նախատեսված, սակայն դեռևս չկառուցապատված ազատ հողերը:

ՀՀ հողային օրենսգրքի 10-րդ հոդված:

Հարց 38. Ի՞նչ փաստաթղթերի հիման վրա են որոշվում բնակավայրերի սահմանագծերը:

- Հաստատված քաղաքաշինական և հողաշինարարական փաստաթղթերի հիման վրա:

ՀՀ հողային օրենսգրքի 11-րդ հոդված:

Հարց 39. Ի՞նչ փաստաթղթի հիման վրա են սահմանվում քաղաքամերձ գոտիների սահմանները և իրավական ռեժիմը:

- Օրենքով:

ՀՀ հողային օրենսգրքի 12-րդ հոդված:

Հարց 40. Ո՞ր գործառնական նշանակության հողամասերն են դասակարգվում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի շարքում:

- Արդյունաբերական օբյեկտների, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, պահեստարանների և ընդերքօգտագործման:

ՀՀ հողային օրենսգրքի 13-րդ հոդված:

Հարց 41. Ի՞նչ կարգով են որոշվում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի օգտագործման հատուկ պայմանները:

- Օրենքով սահմանված կարգով:

ՀՀ հողային օրենսգրքի 13-րդ հոդված:

Չարց 42. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողերը ինչպիսի գործառնական նշանակությունների են դասակարգվում:

- Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների:

ՉՉ հողային օրենսգրքի 14-րդ հոդված:

Չարց 43. Ատոմային էլեկտրոկայանի զբաղեցրած հողամասը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում:

- Էներգետիկայի օբյեկտների հողերի:

ՉՉ հողային օրենսգրքի 15-րդ հոդված:

Չարց 44. Ռադիոհաղորդումների օբյեկտների զբաղեցրած հողամասը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում:

- Կապի օբյեկտների:

ՉՉ հողային օրենսգրքի 16-րդ հոդված:

Չարց 45. Խողովակաշարային տրանսպորտի օբյեկտների զբաղեցրած հողամասը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում:

- Տրանսպորտի օբյեկտների հողերի:

ՉՉ հողային օրենսգրքի 17-րդ հոդված:

Չարց 46. Կոյուղագծերով զբաղեցրած հողամասերը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում:

- Կոմունալ օբյեկտների հողերի:

ՉՉ հողային օրենսգրքի 18-րդ հոդված:

Չարց 47. Մշակութային օբյեկտներով զբաղեցրած հողամասերը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում:

- Պատմական և մշակութային:

ՉՉ հողային օրենսգրքի 19-րդ հոդված:

Չարց 48. Ո՞ր մարմնի կողմից է սահմանվում հատուկ պահպանվող տարածքների հողերի առանձնացման, տրամադրման, օգտագործման և պահպանման կարգը:

- ՉՉ կառավարության:

ՉՉ հողային օրենսգրքի 19-րդ հոդված:

Չարց 49. Ինչպե՞ս է սահմանվում հատուկ պահպանվող տարածքների հողերի սահմանման կարգն ու օգտագործման նկատմամբ սահմանափակումները և իրավական ռեժիմը:

- Օրենքով:

ՉՉ հողային օրենսգրքի 19-րդ հոդված:

Հարց 50. Համայնքային գերեզմանատների զբաղեցրած հողամասերը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում:

- Կոմունալ օբյեկտների հողերի:

ՀՀ հողային օրենսգրքի 18-րդ հոդված

Հարց 51. Սահմանվում են արդյոք սանիտարական պահպանության գոտիներ հատուկ սանիտարական պաշտպանություն պահանջող ջրային հողերի համար:

- Այո:

ՀՀ հողային օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մաս:

Հարց 52. Ի՞նչ փաստաթղթերով են սահմանվում ջրային հողերի օգտագործման կարգը:

- Հողային օրենսգրքով և Ջրային օրենսգրքով:

ՀՀ հողային օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մաս:

Հարց 53. Մասնավոր գերեզմանատների զբաղեցրած հողամասերը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում:

- Կոմունալ օբյեկտների հողերի:

ՀՀ հողային օրենսգրքի 18-րդ հոդված

Հարց 54. Ինչպի՞սին պետք է լինի հողամասի ծանրաբեռնվածությունը սերվիտուտով:

- Սերվիտուտը պետք է հնարավորին չափ նվազ ծանրաբեռնի հողամասը:

ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 5-րդ մաս:

Հարց 55. Ենթակա՞ է արդյոք սերվիտուտը պետական գրանցման:

- Ենթակա է:

ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 6-րդ մաս:

Հարց 56. Պահպանվո՞ւմ է արդյոք սերվիտուտը հողամասը մեկ անձից մյուսին անցնելիս:

- Պահպանվում է:

ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 7-րդ մաս:

Հարց 57. Թփուլները հանդիսանում են արդյոք գյուղատնտեսական նշանակության հողատեսք:

- Ոչ:

ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդված:

Հարց 58. Ո՞ր մարմինն է սահմանում հողամասերի պետական հաշվառման կազմակերպման և իրականացման կարգը:

- ՀՀ կառավարությունը:

ՀՀ հողային օրենսգրքի 34-րդ հոդված:

Հարց 59. Սպանդանոց կառուցելու նպատակով նախատեսված հողամասի նպատակային նշանակությունը որ մարմնի որոշմամբ կարող է փոփոխվել:

- Համայնքի ղեկավարի:

ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մաս:

Հարց 60. Ո՞վ կամ ո՞ր մարմինն է սահմանում անշարժ գույքի սահմանների որոշման եղանակը, դրանց ճշտության նկատմամբ տեխնիկական պահանջներն ու սահմանանիշերի ձևերը:

- Անշարժ գույքի պետական ռեգիստրը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մաս

Հարց 61. Ովքե՞ր կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն:

- Պետական լիազոր մարմնի կողմից որակավորման վկայական ստացած անձինք:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մաս

Հարց 62. Մեկ տարվա ընթացքում մեկ անգամ որակավորման վկայականի գործողության կասեցումը հանդիսանում է արդյոք հիմք վկայականի գործողության դադարեցման համար:

- Ոչ:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված

Հարց 63. Ո՞ր մարմինն է սահմանում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները, որակավորման անցկացման կարգն ու պայմանները:

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մաս

Հարց 64. Ո՞ր մարմինն է սահմանում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության որակավորման վկայականի ձևը:

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մաս

Հարց 65. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ գրանցող մարմինը պատասխանատվություն կրու՞մ է արդյոք քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության աշխատանքների իրականացման որակավորում ստացած անձանց աշխատանքների որակի և տվյալների հավաստիության համար:

- Պատասխանատվություն չի կրում:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մաս



Չարց 66. Որ դեպքում խախտում կատարած անձի որակավորման վկայականի գործողությունը չի կարող կասեցվել:

- եթե օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների չկատարման ձևով խախտման օրվանից անցել է վեց ամսից ավելի:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված

Չարց 67. Ու՞մ միջոցների հաշվին են իրականացվում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության աշխատանքները:

- Անշարժ գույքի սեփականատիրոջ /օգտագործողի/ միջոցների հաշվին:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մաս

Չարց 68. Անտառները հանդիսանում են արդյոք անշարժ գույքը:

- Այո:

Քաղաքացիական օրենսգիրք 134-րդ հոդված

Չարց 69. Ի՞նչ է անշարժ գույքի միավորը:

- Միասնական տարածական ամբողջություն կազմող գույքի մասը, որը հանդիսանում է մեկ, իսկ ընդհանուր սեփականության դեպքում՝ մեկից ավելի անձանց սեփականության կամ այլ գույքային իրավունքների օբյեկտ:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված

Չարց 70. Ընդերքի մասերը հանդիսանում են արդյոք անշարժ գույքը:

- Այո:

Քաղաքացիական օրենսգիրք 134-րդ հոդված

Չարց 71. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է արդյոք պետական գրանցման:

- Այո:

Քաղաքացիական օրենսգիրք 135-րդ հոդված

Չարց 72. Ինչ իրավական նորմատիվ ակտով է սահմանվում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կարգը և դրանց գրանցումը մերժելու հիմքերը:

- Օրենքով:

Քաղաքացիական օրենսգիրք 135-րդ հոդված

Չարց 73. Ի՞նչ է շինության հատակագիծը:

- Շենքի, շինության հարկերի հորիզոնական կտրվածքի, իսկ առանձին կանգնած շենքերի, շինությունների դեպքում՝ նաև հողամասում դրանց տեղադրության՝ որոշակի մասշտաբով և պայմանական նշաններով արտապատկերում:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված

Հարց 74. Որ մարմինն է հաստատում հողամասի և շինության օրենքով նախատեսված հատակագծերի ձևերը և հատակագծերին ներկայացվող պահանջները:

- Մահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված

Հարց 75. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետք է արդյոք ներկայացվի նաև գրանցվող հողամասի հատակագիծը, եթե գրանցման ներկայացվող հողամասի նկատմամբ 1998 թվականի մարտի 1-ից հետո իրավունքների պետական գրանցում չի կատարվել:

- Այո:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված

Հարց 76. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետք է արդյոք ներկայացվի նաև գրանցվող հողամասի հատակագիծը, եթե կատարվելու է 1998 թվականի մարտի 1-ից հետո գրանցված հողամասի սահմանների փոփոխության (բաժանման, միավորման կամ ուղղման), բացառությամբ գրանցված հողամասերի սահմանների միավորման, պետական գրանցում:

- Այո:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված

Հարց 77. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետք է արդյոք ներկայացվի նաև շինության հատակագիծը, եթե ներկայացվող շինության նկատմամբ 1998 թվականի մարտի 1-ից հետո իրավունքների պետական գրանցում չի կատարվել:

- Այո:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված

Հարց 78. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետք է ներկայացվի արդյոք նաև շինության հատակագիծը, եթե կատարվելու է նոր ստեղծված (կառուցված) շինությունների նկատմամբ իրավունքների պետական գրանցում:

- Այո:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված

Հարց 79. Ո՞վ է ապահովում պետական քաղաքականության իրականացումը քաղաքաշինության բնագավառում:

- ՀՀ կառավարությունը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 10

Հարց 80. Ո՞վ կամ ո՞ր մարմինն է սահմանում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և հաստատման կարգերը:

- ՀՀ կառավարությունը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 10

Հարց 81. Ո՞վ կամ ո՞ր մարմինն է հաստատում քաղաքաշինական և տարածքային զարգացման հանրապետական և մարզային պետական ծրագրերը:

- ՀՀ կառավարությունը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 10

Հարց 82. Ի՞նչ նպատակով են մշակվում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը:

- Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների, դրանց խմբերի կամ առանձին հատվածների համար:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 10.1

Հարց 83. Ո՞ր անշարժ գույքի օբյեկտների վրա են տարածվում գոտիավորմամբ սահմանված պահանջները:

- Տարածվում են անշարժ գույքի բոլոր օբյեկտների վրա և պահպանում են իրենց ուժը սեփականատերերի կամ օգտագործողների փոփոխման դեպքում:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.1

Հարց 84. Հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են արդյոք պարտադիր պետական գրանցման:

- Պարտադիր ենթակա են պետական գրանցման:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 85. Ի՞նչ փաստաթղթերով է կանոնակարգվում համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեությունը:

- Համայնքի գլխավոր հատակագծով և քաղաքաշինական գոտիավորման նախագծով:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 86. ՀՀ ո՞ր համայնքների համար է մշակվում պարզեցված գլխավոր հատակագիծ:

- ՀՀ գյուղական համայնքների:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 87. Ի՞նչ իրավունք է ստանում համայնքի ավագանին՝ գլխավոր հատակագծի նախագծային փաստաթղթերը հաստատելուց հետո:

- Իրավունք է ստանում փոխել հողամասերի նպատակային նշանակությունը՝ գլխավոր հատակագծով սահմանված ծավալով ու փուլերով:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 88. Ի՞նչ ծրագրերի համապատասխան են համայնքի սեփականություն համարվող հողամասերը օտարվում կամ օգտագործման են տրամադրվում:

- Համայնքի ավագանու հաստատած ամենամյա և քառամյա ծրագրերին համապատասխան:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 89. Համարվում է արդյոք հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված եթե սեփականատիրոջ դիմումի համաձայն համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասը և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացրած որոշումն մտել է ուժի մեջ:

- Այո:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 90. Հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխությունների մասին համայնքի ղեկավարը ի՞նչ ժամկետում է տեղեկացնում անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմնին:

- 10-օրյա ժամկետում:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 91. Ի՞նչ բնույթի փաստաթուղթ է համայնքի քաղաքաշինական գոտիավորման նախագիծը:

- Համայնքի տարածական զարգացման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ է:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 92. Հիմք է հանդիսանում արդյոք քաղաքաշինական գոտիավորման նախագիծը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի տրամադրման համար:

- Այո

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 93. Հիմք է հանդիսանում արդյոք համայնքի քաղաքաշինական գոտիավորման նախագիծը ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման համար:

- Այո

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 94. Հիմք է հանդիսանում արդյոք համայնքի քաղաքաշինական գոտիավորման նախագիծը շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման համար:

- Այո

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 95. Գյուղական համայնքներում և մինչև տասնհինգ հազար բնակչություն ունեցող քաղաքային համայնքներում ո՞ր տարածքների համար է մշակվում գոտիավորման նախագիծ:

- Մշակվում է բնակավայրի, ինչպես նաև բնակավայրից դուրս գտնվող կառուցապատված կամ կառուցապատման ենթակա բոլոր տարածքների համար՝ գլխավոր հատակագծի կազմում:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք հոդված 14.3

Հարց 96. Ո՞ր համայնքների համար են գլխավոր հատակագծերն ու գոտիավորման նախագծերը մշակվում որպես ինքնուրույն փաստաթղթեր:

- Միավորված համայնքների կամ միջհամայնքային կազմում ներառված և տարածական պլանավորման փաստաթղթեր չունեցող 15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 14.4

Հարց 97. Քանի՞ խմբի են բաժանվում քաղաքաշինական փաստաթղթերը:

- Երկու:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 17

Հարց 98. Որո՞նք են համարվում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր:

- Կառուցապատման նախագծերը, ինչպես նաև քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով գործառական տարածքների հատակագծման և բարեկարգման նախագծերը:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 17

Հարց 99. Նախագծի գործնական իրականացման ընթացքում հեղինակի մասնակցության կանոնները որո՞ մարմինն է սահմանում:

- ՀՀ կառավարությունը:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

Հարց 100. Համարվում են արդյոք ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների կառուցման, դրանց վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման նախագծերը, ինչպես նաև ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների և դրանց մասերի նախագծերը:

- Այո:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 17

Հարց 101. Ի՞նչ է տրվում կառուցապատողին ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար:

- ճարտարապետահատակագծային առաջադրանք:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 17

Հարց 102. Ո՞վ է սահմանում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման կարգերը:

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 17

Հարց 103. Ո՞վ է տալիս ճարտարապետահատակագծային առաջադրանքը համայնքում:

- Համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 22

Հարց 104. Ո՞վ է տալիս շինարարության թույլտվությունը համայնքում:

- Համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 23

Հարց 105. Ի՞նչ է քանդման թույլտվությունը:

- Քանդման թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է սեփականատիրոջ իրավունքը՝ իրականացնել շենքերի և շինությունների քանդումը:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 24

Հարց 106. Ո՞վ է տալիս քանդման թույլտվությունը:

- Համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 24

Հարց 107. Ե՞րբ է սահմանված կարգով տրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան նշումով, հանդիսանում նաև քանդման թույլտվություն:

- Երբ նոր կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց նույն վայրում գտնվող շենքի կամ շինության քանդման:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 24

Հարց 108. Ո՞վ է փաստագրում ավարտված շինարարության շահագործման ընդունումը:

- Համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 25

Հարց 109. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս որպես ի՞նչ է հանդես գալիս:

- Որպես կառուցապատող:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 6

Հարց 110. Ինչպե՞ս կարող է օգտագործել քաղաքաշինական գործունեության օբյեկտի սեփականատերն իրեն պատկանող օբյեկտը:

- Կարող է օգտագործել միայն ըստ նպատակային նշանակության:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 6

Հարց 111. Ո՞վ է ապահովում քաղաքաշինական օբյեկտի շահագործման որակական վիճակը նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

- Սեփականատերը:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 6

Հարց 112. Ի՞նչ կարգով են պարտավոր կառուցապատում իրականացնել կառուցապատողները:

- Կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 6

Հարց 113. Կառուցապատողները ինչի՞ վերաբերյալ պետք է համաձայնության գան կառուցապատման հետևանքով վնաս կրող սուբյեկտների հետ մինչև շինարարություն սկսելը, ինչպես նաև շինարարության ընթացքում:

- Մինչև շինարարություն սկսելը, ինչպես նաև շինարարության ընթացքում կառուցապատողները պետք է համաձայնության գան կառուցապատման հետևանքով վնաս կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 6

Հարց 114. Ովքեր և ի՞նչ կարգով են պարտավորել ապահովել քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը:

- Կառուցապատողներն՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 6

Հարց 115. Կարո՞ղ են արդյոք քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք կատարել կամ ներգրավվել իրենց մշակած նախագծերի փորձաքննությանը:

- Չեն կարող:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 6

Հարց 116. Որ մարմին է տրամադրում ճարտապետահատակագծային առաջադրանքը:

- Համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինը:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 6

Հարց 117. Ի՞նչ պարտավորություններ ունեն քաղաքաշինական փաստաթղթեր մշակողները:

- Օրենքով նախատեսված դեպքերում ունենալ համապատասխան գործունեության իրավունքի լիցենզիա, կատարել քաղաքաշինական փաստաթղթերի մշակման առաջադրանքների և քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները:

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք հոդված 8

Հարց 118. Ի՞նչ են ներառում Հայաստանի Հանրապետության տարածքում չափագրման (հաշվառման) աշխատանքները:

- Հողամասերի, շենքերի, շինությունների չափագրման աշխատանքներ:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

Հարց 119. Քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնող անձն իրավունք ունի արդյոք մասնակցելու կոմիտեում իր գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և ծանոթանալու հարցերին առնչվող բոլոր փաստաթղթերին:

- Այո:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

Հարց 120. Քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնող անձն իրավունք ունի արդյոք գործունեությունն իրականացնելու նպատակով՝ Կադաստրի կոմիտեից ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն:

- Այո:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

Հարց 121. Քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնող անձն իրավունք ունի արդյոք պատվիրատուից պահանջելու կատարվող աշխատանքներին վերաբերող անհրաժեշտ նյութերը:

- Այո:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

Հարց 122. Ի՞նչ տարբերակով է պարտավոր աշխատանքները պատվիրատուին ներկայացնել քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձը:

- Աշխատանքները պատվիրատուին ներկայացնել թղթային տարբերակով և համապատասխան ծրագրով կազմված թվային (Էլեկտրոնային) կրիչներով:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

Հարց 123. Ու՞մ պահանջի դեպքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձը պետք է ներկայացնի վկայականի բնօրինակը:



- Պատվիրատուի պահանջի դեպքում:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

Հարց 124. Ո՞ր մարմնի կողմից է անցկացվում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուների որակավորումը և տրամադրվում որակավորման վկայականները:

- Կադաստրին կոմիտեի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

Հարց 125. Ի՞նչ օրենսդրական ակտով է սահմանվում Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման անցկացման կարգն ու պայմանները:

- Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

Հարց 126. Ովքե՞ր կարող են դիմել քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում մասնագիտական որակավորում ստանալու համար:

- ՀՀ այն քաղաքացիները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն կամ քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման), հողաշինարարության գործունեության բնագավառներից որևէ մեկում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

Հարց 127. Ո՞րն է քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում մասնագիտական որակավորման անցկացման նպատակը:

- Ստուգել դիմողների՝ գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքները:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

